ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

Հրավերի նկարագիր՝ Բանկի միջոցառումների կազմակերպման գործընթացներում ներգրավելու նպատակով՝ միջոցառումներ կազմակերող կազմակերպությունները հրավիրվում են անցնել նախաորակավորում:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում կկարողանան ուղղակիորեն մասնակցել Բանկի կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպման մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող սահմանված չափանիշները բավարարող բոլոր փաստաթղթերը:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

Նախաորակավորման չափանիշներ և պահանջներ

- Առնվազն 2 տարվա փորձ տվյալ ոլորտում, միջոցառումների կազմակերպման փորձ (կատարած աշխատանքների ու դրանց ծավալների մասին կազմակերպության տնօրենի կողմից վավերացված տեղեկանք), տարբեր ընկերությունների հատ կատարված աշխատանքների ցանկ:

Բանկային/ֆինանսական ոլորտում կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես առավելություն:

- Մեկ օրացուցային տարվա ընթացքում 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ և ավել նախագծերի իրականացում և կատարված աշխատանքների հիմքեր:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվութուն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:

Նախաորակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարույթում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատերեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն, որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

- **Փաստաթղթերի ներկայացման կարգ՝**

Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՐԱՎԵՐ»:

Հարցերի դեպքում դիմել՝ Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08,

Ներկայացման լեզու՝ հայերեն,

Ժամկետ՝ 26/06/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորման փուլն անցած կազմակերպություններին՝ Բանկի կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան միջոցառումների կազմակերպման հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված: Ծրարը և մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության իրավասու մարմնի կողմից կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Գնառաջարկը, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, պետք է ներառի տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08)